Հայաստանի շահերն էլ հաշվի առնեն, բայց տեղ և շատ ծանր հետևանքներ, որոնց մէջ, առաջին շարքում, անկասկած, այն չափազանց աննպաստ անդրադարձումն էր, որ ունեցաւ արտաքին աշխարհում. երկու նորաստեղծ պետութիւնների պատերազմը, իրենց ինքնուրոյն կեանքի արշալոյսին, չէր կարող նպաստել բարենիշ նրանց համար:

*

Զինադադարի յաջորդ օրն իսկ, հայկական հաշտարար պատւիրակութիւնը Ղարաքիլիսայից հասաւ Թիֆլիս, և մի շարք նախապատրաստական աշխատանքներից յետոյ, յունւարի կէսերին, բացւեց հայ-վրացական խորհրդաժողովը, որը զբաղւեց ո՛չ միայն պատերազմի հաշւեյարդարով, այլ և երկու երկրների փոխյարաբերութիւններին վերաբերող բոլոր կարևոր խնդիրներով: Հայերի կողմից խորհրդաժողովին մասնակցում էր Ղարաքիլիսա ուղարկւած պատւիրակութեան ամբողջ կազմը՝ լրացւած զինւորական մասնագէտ գօր. Ղորղանեանով: Վրացիների պատւիրակութեան անդամներն էին Ե. Գեղեչկորին, Ն. Ռամիշվիլին, Սաբախտարաշվիլին և գօր. Գեղեւանովը:

Օրակարգի հարցերն էին. 1) փոխադարձ անկախութեան ճանաչումն ու դիւանագիտական յարաբերութիւնների վերականգնումը. 2) հաղորդակցութեան և երթևեկութեան պայմանների կարգաւորումը. 3) Թրանզիտ. 4) փոստ-հեռագրական համաձայնութիւն. 5) հայկական կորպուսի գրաււած գոյքերի վերադարձը. 6) հայկական կառավարութեան պատկանող և վրացիներից գրաււած 13 միլիոն ռուբլի գումարը վերադարձնելու խնդիր:

Խորհրդաժողովը տևեց շատ երկար, մօտ 3 ամիս: Վրացիները ակնյայտնի կերպով աշխատում էին ձգձգել՝ քաջ գիտակցելով, որ ինչքան ժամանակ անցնի, այնքան դրութիւնը Հայաստանում կը ծանրանայ, հետեւաբար, և այնքան հայ պատգամաւորները կը լինեն դիջող: Վէճի գլխաւոր նիւթը սահմանների հարցն էր, որի վերաբերմամբ կողմերը մինչև վերջ էլ համաձայնութեան չեկան:

Տեսնելով վրացիների դիտումնաւոր ձգձգումը՝ Հայաստանի կառավարութիւնը փետր. 10-ին հրահանգեց իր պատւիրակութեան՝ մինչև մարտ վերջացնել բանակցութիւնները և մեկնել Երևան: Մի պահ դադարից յետոյ, խորհրդաժողովը վերսկսեց փետր. 28-ին և այնուհետև աշխատանքները ընթացան աւելի արագ: Ընդունւեց փոխադարձ անկախութիւնների ճանաչման և դիւանագիտական յարաբերութիւնների վերականգման դաշինքը: Մշակւեց Լոռիի չէզոք գօտու վարչութեան առանձին կանոնագիր: Մարտ 1-ին ստորագրւեց և ուժի մէջ մտաւ փոստ-հեռագրական համաձայնութիւնը: Մարտ 4-ին վերականգնւեց երկաթուղային հաղորդակցութիւնը. վերացւեցին ճամբորդական արտօնագրերը Հայաստանի ու Վրաստանի միջև, բացի զաղթականներից: Մարտի սկզբին բացւեց Թիֆլիսի հայկական դիւանագիտական ներկայացուցչութիւնը՝ Մ. Թումանեանի պաշտօնակատարութեամբ.